Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-ԿՆ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 4. Երևան - 4 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10-31.14. 2024թթ. |
| Ներկայացման օր | 16.12.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են՝

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

1. **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 76 շահառուի Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 5 դեպքի վարում՝ տարեկան վերափաստագրման 5 դեպք: Եռամսյակի ընթացքում միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնից ձեռք է բերվել թվով 24 շահառուների համար միավորների տեղեկանք՝ դեղերի ստացման, բժշկական կենտրոններում անվճար հետազոտություններ անցնելու համար և այլն: Սոցիալական աշխատողը թվով 16 շահառուի միջնորդել և ուղղորդել է միասնական սոցիալական ծառայություն՝ օժանդակ պարագաների ձեռք բերման նպատակով, կենսաթոշակի վերահաստատումը կազմակերպելու նպատակով, նոր անձնագիր ստանալու նպատակով և այլն: Թվով 2 շահառուի ուղեկցվել է ՄՍԾՏԿ, տարբեր բժշկական կենտրոններ և այլն:

   Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 4 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայունության ձևավորմանը, պահպանմանը, անձի հուզական և մտավոր ունակությունների ու հմտությունների զարգացման ու ճգնաժամային իրավիճակներին համապատասխան վարքի դրսևորման հնարավորությունների ստեղծմանը:

Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
Տնային սպասարկման շահառու ընտանիքներին տրամադրվել է սննդային փաթեթներ:
Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է 11 միջոցառում, որոնց մասնակցել է թվով 5 շահառու.

- ✓ Միջոցառում նվիրված տարեցների միջազգային օրվան:
- ✓ Էքսկուրսիա Էջմիածին. Սբ. Հռիփսիմե և Սբ. Գայանե եկեղեցիներ, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, Ռուբեն Սևակի և Խրիմյան Հայրիկի անվան թանգարաններ:
- ✓ Ուխտագնացություն դեպի Ծաղկեվանք, նաև «ՀԻն Օջախ» ռեստորանային համալիր:
- ✓ Մոսկվա կինոթատրոնում «Մեդալի հակառակ կողմը» ֆիլմի դիտում, ինչպես նաև հյուրասիրություն «Տաշիր պիցցա» արագ սննդի վայրում:
- ✓ Էքսկուրսիա Գյումրի. «Յոթ վերք» եկեղեցի, «Թարս ու շիտակ» թանգարան, Հառիճավանք:
- ✓ 100-ամյա հոբելյանական տարեդարձի նշում:
- ✓ Մասնակցություն Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում ազգային նվագարանների պետական համույթի համե»գին՝ նվիրված Հ. Բադալյանի 100 ամյակին:
- ✓ Մասնակցություն Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի ելույթին՝ Արմենիա միջազգային երաժշտական փառատոնի շրջանակներում
- ✓ Մասնակցություն Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում «Ակունք» ազգագրական համույթի համերգին:
- ✓ Մասնակցություն Արամ Խաչատրյան համերգասրահում Հայաստանի ազագային սիմֆոնիկ նվագախումբի ելույթին՝ «Աղաջիո» 12-րդ միջազգային երաժշտական փառատոնի շրջանակներում:
- ✓ Մասնակցություն Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում Հայաստանի ազագային Ֆիլիարմոնիկ նվագախումբի համերգին:

- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 76 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 76 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 44 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է

բերվել անվճար դեղորայք: 31 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով, այդ թվում շահառու նեղ մասնագետների մոտ, «Ավագյան» կենտրոն, «Վարդանանց» կենտրոն, «Էրեբունի» ԲԿ, «Աստղիկ» ԲԿ, շահառուներ կան, որ եռամսյակը մի քանի անգամ ուղեկցվել են ատամնաբուժարան, տարբեր պոլիկլինիկաներ: 5 շահառուի համար բուժքրոջ կողմից կատարվել է տնային պայմաններում հետազոտությունների իրականացման կազմակերպում, 1 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 5 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական): Թվով 6 շահառուի համար կատարվել է վերքի մշակում, վիրակապում: Թվով 9 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ և թվով 1 շահառուի համար իրականացվել է անվճար վիրահատական միջամտություն: Թվով 6 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնումներ (շարունակական), թվով 1 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է բժշկական քարտից քաղվածք, թվով 22 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է վերջիններիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը և հանձնվել շահառուներին:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել է հետևյալ նյութերը.

1. Այցելություն Լոռու մարզ՝ Դսեղ՝ Թումանյանի տուն-թանգարան, Սանահին եւ Հաղպատի վանքեր (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ http://surl.li/wstdxk)
2. Ուխտագնացություն Սբ. Հռիփսիմե և Սբ. Գայանե եկեղեցիներ, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, Ռուբեն Սևակի և Խրիմյան Հայրիկի անվան թանգարաններ (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ http://surl.li/mkjamd)
3. Այցելություն Գյումրի. «Յոթ վերք» վան, «Թարս ու շիտակ» թանգարան, Ձերքեզի ձոր, Հառիճավանք (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ http://surl.li/aqhbub)
4. Ուխտագնացություն դեպի Ծաղկեվանք, ինչպես նաև խաշ փարթի «Հին օջախ» ռեստորանային համալիրում (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ http://surl.li/xmdfny)
5. Այցելություն Մոսկվա կինոթատրոն (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ http://surl.li/qumvvz)
6. 100-ամյա հոբելյանական տարեդարձի նշում (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ http://surl.li/xjpqko)

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- ✓ Տեղացի տարեցների և Արցախից բռնի տեղահանված տարեցների համար Ծաղկաձորի «Ռոսիա» հյուրանոցում կազմակերպված աշնանային ճամբարում բուժքրոջ կողմից իրականացվել է դասընթաց «Առողջ ափսե» խորագրով:
  Ճամբարի 2-րդ փուլին մասնկացել է նաև թիմի պատասխանատուն:
- ✓ Արցախից բռնի տեղահանված քաղաքացիների կարիքների գնահատման նպատակով պաշտպանության մոնիթորինգ է իրականացվել Թիմ լիդերի՝ Անահիտ Մխիթարյանի, սոցիալական աշխատող Դեզդեմոնա Ասատրյանի կողմից:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 76/75 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 67 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 5 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 4 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 70 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –4<br>Բ - 71 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 76 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 76 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 76 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 5 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 5 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն<br>սննդային փաթեթի տրամադրում | 4<br>72 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «16» 12.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)